


Ընդունելություն ՀՀ Վայոց ձորի մարզպետի մոտ

01.04.2015



2015 թվականի ապրիլի 1-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի մոտ կայացավ աշխատանքային հանդիպում ՕՔՄՖԱՄ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Մարգարիտա Հակոբյանի և աշխատանքային խմբի հետ: Վայոց ձորի կողմից մասնակցում էին մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը, ՀՀ Վայոց ձորի փրկարարական վարչության պետ, փ/ծ մայոր Տիգրան Պետրոսյանը, Ընդդեմ իրավական կամայականության ՀԿ-ի Եղեգնաձորի և Վայքի ղեկավարները: Իսկ Օքսֆամի հայաստանյան գրասենյակի կողմից մասնակցում էին ՕՔՄՖԱՄ-ի Հումանիտար ծրագրի Հայաստանի և Վրաստանի կոորդինատոր Աննա Պալոնկան, ԱՌՆ ծրագրի պատասխանատու Զարուհի Տոնոյանը, նույն ծրագրի խորհրդատու Ռուզաննա Ստեփանյանը, “Ապավեն Համայնքներին” ԲՀԿ ծրագրի խորհրդատու Կարինե Գաբրիելյանը:

Մարզպետը ողջունեց հանդիպման մասնակիցներին և շնորհակալություն հայտնեց այցելության համար: Մարգարիտա Հակոբյանը ներկայացրեց ՕՔՄՖԱՄ-ի հայաստանյան գրասենյակի կողմից Վայոց ձորի մարզում իրականացված աշխատանքներն ըստ փուլերի՝ օժանդակության ծրագրերով համայնքային բուժկետերի վերանորոգում, գույքավորում, բուժքույրերի վերապատրաստում, այնուհետ զարգացման ծրագրերով մարզի մի շարք համայնքներում գյուղմթերքի պահպանման սառնարանների կառուցում: Ներկա փուլում իրականացվում է ԱՌՆ (Աղետների ռիսկի նվազեցման) ծրագիրը: Ներկայացվեց „Տեղական մակարդակում աղետների ռիսկի գնահատման, ծրագրի իրականացման աշխատանքներում ՀՀ Վայոց ձորի մարզային իշխանությունների, ՀՀ Վայոց ձորի փրկարարական վարչության, ՀԿ սեկտորի, կամավորական խմբերի կողմից ցուցաբերված աջակցությունը: Մարզպետ Հարություն Սարգսյանը նշեց, որ դեռևս Վայք քաղաքի ղեկավար եղած տարիներին համագործակցել է գրասենյակի հետ, որը մարզի բնակչության համար շնորհակալ ու կարևոր նշանակության գործ է կատարել, շնորհակալություն հայտնեց հետագա համագործակցության պատրաստակամության համար և իր հերթին պատրաստակամություն հայտնեց՝ ամեն կերպ օժանդակելու մարզում իրականացվող զարգացման ցանկացած ծրագրի իրականացմանը և շարունակելիության ապահովմանը: